

040.1647.081204

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"8" դեկտեմբերի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

18 նոյեմբերի 2004 թվականի N 1647-Ն

ՄԻՆԹԵՏԻԿ ՀԻՄՔՈՎ ԼԱՔԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Ստանդարտացման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով լաքերի եւ ներկերի բազմազանությունը, օգտագործման ծավալները, մարդու կյանքի ու առողջության, կենդանիների եւ բույսերի կյանքի ու առողջության, շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության ռիսկի աստիճանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել սինթետիկ հիմքով լաքերի եւ ներկերի տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ եռամսյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով հաստատել լաքերի եւ ներկերի արտադրության եւ իրացման սանիտարական կանոնները եւ նորմերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետ՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետով հաստատված տեխնիկական կանոնակարգի 20-րդ կետի պահանջի, որն ուժի մեջ է մտնում սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից երկու տարի հետո:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ

Հավելված
ՀՀ կառավարության
2004 թվականի նոյեմբերի 18-ի
N 1647-Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՄԻՆԹԵՏԻԿ ՀԻՄՔՈՎ ԼԱՔԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն սինթետիկ հիմքով լաքերի եւ ներկերի տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունն արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերին համապատասխան տարածվում է հետևյալ սինթետիկ հիմքով լաքերի եւ ներկերի (այսուհետ՝ լաքաներկանյութեր)

վրա, որոնք նախատեսված են առավելապես շենքերի եւ շինությունների ներքին հարդարման եւ կահույքի համար՝

լաքեր եւ արծնաներկեր (արծններ)՝ սինթետիկ կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով, որոնք դիսպերսված կամ լուծված են ոչ ջրային միջավայրում (այսուհետ՝ օրգանանոսրացվող լաքաներկանյութեր) 3208,

լաքեր եւ ներկեր՝ սինթետիկ կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով, որոնք դիսպերսված կամ լուծված են ջրային միջավայրում (այսուհետ՝ ջրադիսպերսային լաքաներկանյութեր) 3209:

Նշված լաքաներկանյութերի դասակարգումը ներկայացված սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում:

(1-ին կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետում նշված լաքաներկանյութերի անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց պահման, փոխադրման փուլերում անվտանգության ապահովման եւ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ պահանջները, ինչպես նաեւ համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում հետեւյալ լաքաներկանյութերի վրա՝

արծններ՝ սիլիկատային (բովախառնուրդներ),

լաքաներկանյութեր՝ բիտումների եւ բնական խեժերի հիմքով,

լաքաներկանյութեր, որոնք օգտագործվում են սննդամթերքի հետ շփվող նյութերի եւ առարկաների ներկման կամ պատման համար,

լաքեր՝ գունավոր,

լաքեր՝ հեղուկ, էպօքսիդային կամ պոլիուրեթանային հիմքով, որոնք չեն պարունակում լուծիչ,

հակաբուսապատման լաքաներկանյութեր,

հակախեցային ներկեր (թունավոր նյութեր պարունակող),

ներկեր՝ գեղարվեստական, այդ թվում՝ ջրաներկեր,

ներկեր՝ թանձրալեսած,

ներկեր՝ սիլիկատային,

ներկեր եւ լաքեր՝ յուղային,

ներկեր՝ սոսնձային,

ներկեր՝ տպագրական:

4. Սինթետիկ հիմքով լաքերը եւ ներկերը ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. սույն տեխնիկական կանոնակարգում օգտագործված են հետեւյալ հասկացությունները՝

արծնաներկ (արծն)՝ ներկ, որը գունանյութերի կամ դրանց հետ լցանյութերի խառնուրդի կախույթն է լաքի մեջ.

գունանյութ՝ նյութ՝ մանրադիսպերս մասնիկների տեսքով, գործնականում չլուծվող լաքաներկային միջավայրում, որն օգտագործվում է իր օպտիկական-պաշտպանական կամ դեկորատիվ հատկությունների շնորհիվ.

թաղանթագոյացնող նյութ՝ լաքաներկային միջավայրի չցնդող մաս, որը գոյացնում է թաղանթ եւ կապում գունանյութը.

լաք՝ նյութ, որը պատվող մակերեւույթի վրա գոյացնում է կարծր, թափանցիկ թաղանթ՝ պաշտպանական, դեկորատիվ կամ հատուկ տեխնիկական հատկություններով.

լաքաներկային միջավայր՝ բաղադրամասերի համախումբ, որը կազմում է ներկի

հեղուկ ֆազը.

լաքաներկանյութ՝ նյութ, որն օժտված է պատվող մակերևույթի վրա պաշտպանական կամ դեկորատիվ թաղանթ գոյացնելու հատկությամբ.

լաքաներկանյութի թաղանթ՝ չընդհատվող շերտ, որն ստացվում է մակերևույթի միանգամյա կամ բազմապատիկ պատումից.

լաքաներկանյութի լուծիչ՝ լաքաներկանյութի չորացման պայմաններում ցնդող միաբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ հեղուկ, որում թաղանթագոյացնող նյութը լրիվ լուծվում է.

լաքաներկանյութի չորացում՝ կերպափոխումների համալիր, որը հանգեցնում է հեղուկ լաքաներկանյութի թաղանթի պնդացմանը.

լցանյութ՝ փոշենման նյութ՝ սովորաբար սպիտակ կամ թույլ գունավորված, 1,7-ից պակաս բեկման ցուցիչով, գործնականում չլուծվող լաքաներկային միջավայրում, որն օգտագործվում է իր ֆիզիկական եւ քիմիական հատկությունների շնորհիվ.

ներկ՝ գունանյութ պարունակող հեղուկ կամ փոշենման նյութ, որը պատվող մակերևույթի վրա գոյացնում է ոչ թափանցիկ թաղանթ՝ պաշտպանական, դեկորատիվ կամ հատուկ տեխնիկական հատկություններով.

վերափոխված բնական պոլիմեր՝ պոլիմեր, որի քիմիական կառուցվածքը ներառում է բնական նյութ՝ մասամբ ձեւափոխված համապատասխան քիմիական ռեակցիաների արդյունքում:

III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետության տարածքում լաքաներկանյութերի իրացումն առանց համապատասխանության հավաստման՝ արգելվում է:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա եւ շրջանառության մեջ գտնվող լաքաներկանյութերը պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով կամ գրանցված համապատասխանության հայտարարագրով:

IV. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Լաքաներկանյութերին ներկայացվող պահանջները

8. Օրգանանոսրացվող լաքերի եւ արծնաներկերի անվտանգությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են համապատասխանաբար 1-ին եւ 2-րդ աղյուսակներում, ջրադիսպերսային լաքաներկանյութերինը՝ 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 1. Լաքերի անվտանգությունը բնութագրող ցուցանիշներն ըստ լաքաներկանյութերի դասակարգման

	Նորմը	
	լաքեր	
Ցուցանիշի անվանումը	_____	
	պոլիուրե նիտրաթա- պոլիէթե- պենտա այլ	
	թանային դանթանյու րային՝ ֆտալա	
	թային չհագեցած յին	

1	2	3	4	5	6	
Չցնդող նյութերի զանգվածային մասը, %, ոչ պակաս		24	22	25	40	22
Չորացման ժամանակը մինչև 3-րդ աստիճանը. (20+/-2) օC ջերմաստիճանում, Ժ, ոչ ավելի,		36	4	12	72	24
անդրամանուշակագույն ձառագայթամբ չորացնող լամպի տակ (տեսակարար հզորությունը՝ 80 Վտ/սմ), վ, ոչ ավելի					չեն	չեն
		որոշում	որոշում	16	շում	16
Կայունությունը ջրի ստատիկ ներգործության նկատմամբ՝ (20+/-2) օC ջերմաստիճանում, Ժ, ոչ պակաս		24	6	24	8	6
Բռնկման ջերմաստիճանը փակ խալքանությամբ՝ ըստ հետևյալ վտանգավորության դասերի եւ ենթադասերի, օC՝						
3.2		մինուս 18-ից բարձր մինչև 23-ից ցածր				
3.3		23 եւ բարձր մինչև 61-ից ցածր				
9.1		61 եւ բարձր մինչև 90-ից ոչ բարձր				

Աղյուսակ 2. Արձանների անվտանգությունը բնութագրող ցուցանիշներն ըստ լաքաներկանյութերի դասակարգման

Ցուցանիշի անվանումը	Նորմը				
	արձաններ				
նիտրաթա- դանթանյութային՝ թային	պոլիէթե- թային	պենտա- թային	պլաստիկ թային	պլաստիկ թային	պլաստիկ թային
Չցնդող նյութերի զանգվածային մասը, %, ոչ պակաս		21	46	44	21
Չորացման ժամանակը մինչև 3-րդ աստիճանը. (20+/-2) օC ջերմաստիճանում, Ժ, ոչ ավելի,		2	12	48	24
անդրամանուշակագույն ձառագայթամբ չորացնող լամպի տակ (տեսակարար հզորությունը՝ 80 Վտ/սմ), վ, ոչ ավելի		-	15	-	15

Կայունությունը ջրի ստատիկ ներգործության նկատմամբ՝ (20+/-2) օC					
ջերմաստիճանում, Ժ, ոչ պակաս	6	24	8	6	
Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում՝ ըստ հետեւյալ վտանգավորության դասերի եւ ենթադասերի, օC՝					
3.2	մինուս 18-ից բարձր մինչեւ 23-ից ցածր				
3.3	23 եւ բարձր մինչեւ 61-ից ցածր				
9.1	61 եւ բարձր մինչեւ 90-ից ոչ բարձր				

Աղյուսակ 3. Ջրադիսպերսային լաբաներկանյութերի անվտանգությունը բնութագրող ցուցանիշներն ըստ լաբաներկանյութերի դասակարգման

Ցուցանիշի անվանումը	Նորմը		
	լաքեր	ներկեր	
Զցնդող նյութերի զանգվածային մասը, %, ոչ պակաս	30	50	
Ջրածնային ցուցիչը (pH)	6,5-9,5		
Զորացման ժամանակը (20+/-2) օC ջերմաստիճանում մինչեւ 3-րդ աստիճանը, Ժ, ոչ ավելի	1		
	չեն	3,5	
Թաղանթի ողողվելիությունը, գ/մ2, ոչ ավելի		որոշում	

(8-րդ կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

9. Սույն տեխնիկական կանոնակարգի 3-րդ աղյուսակում ներկայացված ջրադիսպերսային լաքերի եւ ներկերի համար՝ վերափոխված ալկիդների կիրառմամբ կարող է սահմանվել նշված նորմերից ավելի երկար չորացման ժամանակ, բայց 24 ժամից ոչ ավելի:

Օրգանանոսրացվող խեժերով վերափոխված ջրադիսպերսային ներկերի համար չցնդող նյութերի զանգվածային մասը պետք է լինի 33 տոկոսից ոչ պակաս:

(9-րդ կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

10. Զորացման աստիճանը, վտանգավորության դասերը եւ ենթադասերը՝ ներկայացված 1-ին եւ 2-րդ աղյուսակներում, սահմանված են սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված ստանդարտների պահանջներին համապատասխան:

11. Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին եւ 2-րդ աղյուսակներում ներկայացված՝ ըստ բռնկման ջերմաստիճանի վտանգավորության դասերը որոշվում են, փոխադրական տարաների, փոխադրական փաթեթների, փաթեթավորման միջոցների, հատուկ բեռնարկղերի եւ ավտոցիստեռնների՝ սույն տեխնիկական կանոնակարգի 13-րդ կետի

"բ" ենթակետով նախատեսված տվյալների մակնշման դեպքում:

(11-րդ կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

12. Լաքաներկանյութերը պետք է արտադրվեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան:

Լաքաներկանյութերի մակնշումը

13. Լաքաներկանյութ պարունակող յուրաքանչյուր սպառողական և փոխադրական տարայի, փոխադրական փաթեթների, փաթեթավորման միջոցների, հատուկ բեռնարկղերի, ավտոցիստեռների վրա պետք է նշվեն՝

ա) արտադրանքը բնութագրող հետևյալ տվյալները՝
արտադրող կազմակերպության (ֆիրմայի) անվանումը,
արտադրող երկրի անվանումը,
արտադրողի և (կամ) վաճառողի գտնվելու վայրը,
լաքաներկանյութի անվանումը, գույնը և տեսակը,
գտաքաշը,
համաքաշը,

սպառողական տարաների թիվը և մեկ սպառողական տարայի գտաքաշը,
խմբաքանակի համարը,
արտադրման տարեթիվը և ամիսը,

լաքաներկանյութի նշանակումը (այդ թվում՝ շինության ներսում և (կամ) դրսում օգտագործման վերաբերյալ ցուցում) և օգտագործման եղանակը,

լաքաներկանյութի անվտանգ պահման, փոխադրման, օգտագործման ու օգտահանման կանոնները և պայմանները,

լաքաներկանյութի հետ վարվեցողության նախագուշակական միջոցառումները,
հիմնական սպառողական հատկությունները և բնութագրերը,
պիտանիության ժամկետը,

"Պաշտպանել կրակից" մակագրությունը՝ օրգանանոսրացվող լաքաներկանյութերի համար,

թաղանթագոյացնող նյութի և լուծիչի տեսակները,

երկու և ավելի բաղադրամասերով լաքաներկանյութերի համար բաղադրամասերի մասին անհրաժեշտ լրացուցիչ տվյալները.

բ) բեռի վտանգավորությունը բնութագրող հետևյալ տվյալները (այն օրգանանոսրացվող լաքաներկանյութերի համար, որոնք դասակարգված են սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված վտանգավոր բեռների դասակարգման և մակնշման ստանդարտով)՝

վտանգավորության նշանը,
բեռի տրանսպորտային անվանումը,

ՄԱԿ-ի կողմից տրված համարը,

դասակարգման ծածկագիրը,

վթարային քարտի համարը (երկաթուղային տրանսպորտով փոխադրման դեպքում).

գ) տրանսպորտային մակնշումը բնութագրող հետևյալ վարվելակարգային նշանները (սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված բեռների մակնշման ստանդարտով)՝

"Բեկուն է: Ջգու յշ",

"Պաշտպանել խոնավությունից",

"Հերմետիկ փաթեթավորում",

"Վերել",

"Պաշտպանել արելի ճառագայթներից",

"Ջերմաստիճանային միջակայքի պահպանում"՝ ջրադիսպերսային լաքաներկանյութերի համար:

Մականշվածքները պետք է գետեղվեն սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված լաքաներկանյութերի մակնշման ստանդարտի պահանջներին համապատասխան:

(13-րդ կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

14. Տարաների վրա պետք է նշվեն գտաքաշի բացասական թույլատրելի շեղումները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ մակագրությունները կամ դրանց որոշ մասի բացառումները՝ սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված մակնշման եւ փաթեթավորման ստանդարտների պահանջներին համապատասխան:

(14-րդ կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

15. Մանրածախ առևտրի համար նախատեսված լաքաներկանյութերի տարայի կափարիչի կամ օղակի վրա պետք է նշված լինի գունավոր լաքաներկանյութերի ներկվածքը:

16. Տարաների, փոխադրական փաթեթների, փաթեթավորման միջոցների, հատուկ բեռնարկղերի եւ ավտոցիստեռնների մակնշման եղանակները պետք է համապատասխանեն սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված լաքաներկանյութերի մակնշման ստանդարտի պահանջներին:

17. Անմիջապես սպառողական տարայի մակնշման դեպքում մականշվածքի գույնը պետք է հակադիր լինի տարայի գույնին:

18. Երկաթուղային տրանսպորտով փոխադրման ժամանակ բեռի վտանգավորությունը բնութագրող մականշվածքները գետեղվում են հատուկ բեռնարկղերի վրա երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրման կանոններին համապատասխան:

19. Տեղեկատվությունն սպառողի համար պետք է լինի հստակ եւ հեշտ ընթերցելի: Պահմանը, փոխադրմանը, օգտագործմանը եւ օգտահանմանը ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ մակագրությունները պետք է առանձնացվեն այլ տառատեսակով, գույնով կամ այլ եղանակով:

20. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ապահովի Հայաստանի Հանրապետությունում իրացվող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ ներմուծվող լաքաներկանյութերի մասին՝ սույն տեխնիկական կանոնակարգի 13-րդ կետում ներկայացված տեղեկատվության տրամադրումը՝ հայերենով:

21. Մակնշման միջոցները պետք է ապահովեն մականշվածքի կայունությունը լաքաներկանյութերի պահման, փոխադրման, իրացման եւ օգտագործման ամբողջ ընթացքում:

22. Փոքր չափերի (մինչեւ 0,3 դմ³) տարաների դեպքում տեղեկատվությունը գետեղվում է ներդիր թերթիկի վրա, որը կցվում է յուրաքանչյուր տարային կամ մատակարարվող լաքաներկանյութերի ապրանքաուղեկից փաստաթղթերին:

Լաքաներկանյութերի փաթեթավորումը, փոխադրումը եւ պահումը

23. Լաքաներկանյութերի փաթեթավորման համար օգտագործվում են հատուկ բեռնարկղեր, փոխադրական միջոցներ կամ հետեւյալ տեսակների տարաները՝

ա) սպառողական տարաներ՝

բիդոններ՝ մետաղե,

կանխատրներ՝ պոլիէթիլենային,

տարաներ՝ սեւ, սպիտակ կամ քրոմագոծ թիթեղից, համակցված եւ պոլիէթիլենային, շշեր եւ սրվակներ՝ ապակե.

բ) փոխադրական տարաներ՝

տափաշներ եւ թմբուկներ՝ պողպատե, առանց ներքին մակերեսային պատվածքի, ցինկապատ, ներքին պոլիէթիլենային կամ լաքաներկային պատվածքով, պողպատե՝ պոլիէթիլենային ներդիրով, այլումինե (բացառությամբ թմբուկների), տակառներ՝ պողպատե եւ ցինկապատ, այլումինե, փայտե, այդ թվում՝ պոլիէթիլենային ներդրակով:

(23-րդ կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

24. Որոշակի լաքաներկանյութեր փաթեթավորվում են սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված փաթեթավորման ստանդարտների պահանջներին համապատասխան:

(24-րդ կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

25. Լաքաներկանյութերը փոխադրվում են բոլոր տեսակների ծածկված փոխադրամիջոցներով տվյալ տեսակի փոխադրամիջոցի համար գործող՝ բեռների փոխադրման կանոններին համապատասխան:

26. Փաթեթավորված օրգանանոսրացվող լաքաներկանյութերը պահվում են փակ պահեստային շինություններում, շրջապատող միջավայրի մինուս 40-ից մինչեւ 40 օC ջերմաստիճանի պայմաններում:

Փաթեթավորված ջրադիսպերսային լաքաներկանյութերը պահվում են 5 օC-ից բարձր, բայց 35 օC-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում:

Թույլատրվում է փաթեթավորված լաքաներկանյութերը պահել հատուկ հարթակների վրա՝ պաշտպանված արեւի ուղիղ ճառագայթների ազդեցությունից:

Լաքաներկանյութերի վտանգավորության դասերը եւ դրանց արտադրման իրացման ու օգտագործման ժամանակ շրջակա միջավայրի պահպանության պահանջները

27. Լաքաներկանյութերը վնասակար, հրդեհապայթյունավտանգ նյութեր են:

Ըստ օրգանիզմի վրա ազդեցության աստիճանի՝ լաքաներկանյութերը բաժանվում են 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ վտանգավորության դասերի, սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված վնասակար նյութերի դասակարգման ստանդարտի

պահանջներին համապատասխան:

Որոշակի լաքաներկանյութերի վտանգավորության դասը սահմանվում է դրանց նորմատիվ եւ (կամ) տեխնիկական փաստաթղթերով:

28. Լաքաներկանյութերի արտադրության եւ օգտագործման ժամանակ գոյանում են պինդ, հեղուկ եւ գազանման թափոններ, որոնք աղտոտում են ջրերը եւ մթնոլորտային օդը:

29. Լաքաներկանյութերի արտադրության, պահման, փոխադրման եւ կիրառման ժամանակ պետք է ապահովվի "Մթնոլորտային օդի պահպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների կատարումը:

30. Շրջակա միջավայրի աղտոտումից պահպանելու համար կեղտաջրերի հետ միասին ջրային օբյեկտ թափվող լաքաներկանյութերում պարունակվող վնասակար քիմիական նյութերի քանակությունները չպետք է գերազանցեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված սանիտարական կանոններով եւ նորմերով սահմանված թույլատրելի մակարդակները:

31. Սարքավորանքների եւ տարաների մաքրման ժամանակ գոյացած եւ բոլոր այլ աղտոտված լուծիչների մնացորդները պետք է վնասագերծվեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված սանիտարական կանոններին եւ նորմերին համապատասխան:

32. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին լաքաներկանյութերի համապատասխանությունը ճիշտ գնահատելու նպատակով, կախված ռիսկի աստիճանից եւ դրանց բաղադրությունից՝ լաքաներկային միջավայրից, դրանք դասակարգվում են՝

I կատեգորիա՝ ջրադիսպերսային լաքաներկանյութեր,

II կատեգորիա՝ օրգանանոսարացվող լաքաներկանյութեր:

33. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին լաքաներկանյութերի համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր

ներկայացուցիչը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի "Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները եւ նույնականացման նշագրերը սահմանելու մասին" N 1170-Ն որոշմամբ սահմանված հետեւյալ սխեմաներով՝

ա) I կատեգորիայի լաքաներկանյութերի համար՝

1h, 2h, 3h կամ 4h հայտարարագրման սխեմայով հաստատված համապատասխանության հայտարարագիր կամ 1u, 2u, 3u, 4u, 5u կամ 6u սերտիֆիկացման սխեմայով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ.

բ) II կատեգորիայի լաքաներկանյութերի համար՝

2h, 3h, կամ 4h հայտարարագրման սխեմայով հավաստված համապատասխանության հայտարարագիր կամ 2u, 3u, 4u, 5u կամ 6u սերտիֆիկացման սխեմայով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ:

34. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը լաքաներկանյութերի սպառողական եւ փոխադրական տարաների վրա եւ (կամ) ապրանքաուղեկից փաստաթղթերում կարող է նշել համապատասխանության նշանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի "Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները

եւ կիրառման կարգը սահմանելու մասին" N 1281-Ն որոշմամբ սահմանված կարգով:

35. Սերտիֆիկացման մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով լաքաներկանյութերի նմուշառումն իրականացնում է արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ՝ տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով՝ սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված նմուշառման ստանդարտին համապատասխան:

36. Լաքաներկանյութերի նույնականացման գործընթացում ստուգվում է անմիջապես փաթեթավորման տարաների կամ դրանց փակցված պիտակների վրա կատարված

մականշվածքի համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթում տրված տեղեկատվությանը:

37. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված փորձարկման մեթոդների ստանդարտներին համապատասխան:

38. Համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի

գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ իրականացված համապատասխանության հավաստման սխեմայի՝

1u սխեմայի դեպքում՝ 6 ամիս,

1h, 2h կամ 2u սխեմայի դեպքում՝ 12 ամիս,

3u սխեմայի դեպքում՝ 24 ամիս,

3h, 4u կամ 5u սխեմայի դեպքում՝ 36 ամիս,

4h կամ 6u սխեմայի դեպքում գործողության ժամկետը սահմանվում է՝ հաշվի

առնելով լաքաներկանյութերի պիտանիության ժամկետը, բայց 3 տարվանից ոչ ավելի:

39. Սերտիֆիկացման մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացման գործողությունները կատարվել են 2ս-5ս սխեմաներից որեւէ մեկով:

40. Սերտիֆիկացված լաքաներկանյութերի համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ամբողջ ժամկետի

ընթացքում, առնվազն տարեկան մեկ անգամ՝ սույն տեխնիկական կանոնակարգի 39-րդ կետում նշված պայմանագրի հիման վրա:

(40-րդ կետը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)

41. Սերտիֆիկացված լաքաներկանյութերի համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա, "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սերտիֆիկացման մարմինն իրավունք ունի պահպանելու իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ այն կասեցնելու կամ դադարեցնելու:

Համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի

գործողության կասեցման կամ դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ:

42. Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացման մարմինը դրա մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին եւ գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին:

VI. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

43. Լաքաներկանյութերի չափումների միասնականությունը պետք է ապահովվի "Չափումների միասնականության ապահովման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

44. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին լաքաներկանյութերի համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողությունը պետք է իրականացվի "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VIII. ԼԱՔԱՆԵՐԿԱՆՅՈՒԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

45. Լաքաներկանյութերն ըստ քիմիական բաղադրության (թաղանթագոյացնող նյութի տեսակի) դասակարգվում են՝

ակլիդաակրիլային

ակլիդաուրեթանային

ացետաբուտիրատթաղանթանյութային

ացետիլթաղանթանյութային

գլիֆտալային

էթիլթաղանթանյութային

էպօքսիդային

էպօքսիէթերային

Էտրիֆտալային
 կարբամիդային
 կաուչուկային
 համապոլիմեր-վինիլացետատային
 համապոլիմերվինիլքլորիդային
 մելամինային
 յուղաստիրոլային եւ ալկիդաստիրոլային
 նիտրաթաղանթանյութային
 պենտաֆտալային
 պերքլորվինիլային եւ պոլիվինիլքլորիդային
 պոլիակրիլային
 պոլիամիդային
 պոլիէթերային՝ հագեցած
 պոլիէթերային՝ չհագեցած
 պոլիիմիդային
 պոլիուրեթանային
 պոլիվինիլացետալային
 պոլիվինիլացետատային
 վինիլացետիլենային եւ երկվինիլացետիլենային
 սիլիկաօրգանական
 քլորավորված պոլիէթիլենային
 քսիֆտալային
 ցիկլահեքսանոնային
 ֆենոլապլիդային
 ֆենոլային
 ֆտորապլաստային
 ֆուրիլային

IX. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստանդարտի նշագիրը՝ Պահանջներ եւ փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը	
1	2
ԳՕՍՏ 12.1.005	Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքային գոտու օդին ներկայացվող ընդհանուր և սանիտարահիգիենիկ պահանջներ
ԳՕՍՏ 12.1.007	Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Վնասակար նյութեր. Դասակարգում եւ անվտանգության ընդհանուր պահանջներ
ԳՕՍՏ 12.1.044	Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Նյութերի հրդեհապայթյունավտանգավորություն. Ցուցանիշների անվանացանկ եւ դրանց որոշման մեթոդներ
ԳՕՍՏ 9980.2	Լաքաներկանյութեր. Փորձարկումների համար նմուշառում

ԳՕՍՍ 9980.3	Լաքաներկանյութեր. Փաթեթավորում	
ԳՕՍՍ 9980.4	Լաքաներկանյութեր. Մակնշում	
ԳՕՍՍ 14192	Մակնշում բեռների	
ԳՕՍՍ 17537	Լաքաներկանյութեր. Ցնդող եւ չցնդող, պինդ եւ թաղանթագոյացնող նյութերի զանգվածային մասի որոշման մեթոդներ	
ԳՕՍՍ 19007	Լաքաներկանյութեր. Չորացման ժամանակի եւ աստիճանի որոշման մեթոդ	
ԳՕՍՍ 19433	Բեռներ վտանգավոր. Դասակարգում եւ մակնշում	
ԳՕՍՍ 9.403 (բաժին 2)	Լաքաներկային պատվածքներ. Ջրի ստատիկ ներգործության նկատմամբ կայունության փորձարկման մեթոդներ	
ԳՕՍՍ 9980.1 (3-9-րդ կետերը)	Լաքաներկանյութեր. Ընդունման կանոններ	
ԳՕՍՍ 26319	Բեռներ՝ վտանգավոր. Փաթեթավորում	
ԳՕՍՍ Ռ 52020 (9.4, 9.5-րդ կետերը)	Լաքաներկանյութեր՝ ջրադիսպերսային. Ընդհանուր տեխնիկական պայմաններ	
ԻՍՕ 1523	Բռնկման ջերմաստիճանի որոշում. Հավասարակշիռ պայմաններում փակ հալքանոթի կիրառման մեթոդ	

(IX բաժինը փոփ. 16.06.06 թիվ 878-Ն որոշում)